# Ձեր բուժումը Քսալկորի (կրիզոտինիբ) դեղով

Սույն տեղեկագիրը նախատեսված է չափահաս պացիենտների համար, որոնց նշանակվել է Քսալկորի դեղը:

Մշակման ամսաթիվ՝ մայիս 2023թ.

## Բովանդակություն

Ներածություն

**Ի՞նչ է թոքերի ALK-դրական և ROS1-դրական ոչ մանր բջջային քաղցկեղը:**

**Քսալկորի դեղի վերաբերյալ տեղեկություններ**

Ի՞նչ է Քսալկորի դեղը և ի՞նչի համար է այն օգտագործվում

Քսալկորի դեղը ինչպե՞ս կարող է օգնել Ձեզ

Ինչպե՞ս օգտագործել Քսալկորի դեղը

Ինչպիսի՞ կողմնակի ազդեցություններ կարող են առաջանալ Քսալկորի դեղն օգտագործելու դեպքում

Ի՞նչ պետք է անել կողմնակի ազդեցությունների ի հայտ գալու դեպքում

Տեղեկություններ անվտանգության վերաբերյալ

**Տեղեկություններ պացիենտների համար**

Պացիենտի հուշաթերթիկ

## Ներածություն

Հարգելի՛ պացիենտ,

Քսալկորի դեղի դեղապատիճները Ձեզ նշանակել են թոքերի քաղցկեղի բուժման համար:

Սույն տեղեկագրում Դուք կգտնեք Քսալկորի դեղի ազդեցության վերաբերյալ համառոտ տեղեկություններ, կիմանաք, թե բուժման ընթացքում ինչին պետք է ուշադրություն դարձնել և ինչպես նվազեցնել Քսալկորի դեղի օգտագործման ընթացքում կողմնակի ազդեցությունների ի հայտ գալու ռիսկերը:

Խնդրում ենք հիշել, որ սույն տեղեկագրի մեջ ներառված տեղեկությունները չեն կարող փոխարինել բուժող բժշկի խորհուրդներին: Եթե վստահ չեք կամ ունեք հարցեր, խորհրդակցեք բուժող բժշկի հետ:

Ամբողջական տեղեկատվությունը կարող եք գտնել դեղի ներդիր-թերթիկում, որն առկա է դեղի յուրաքանչյուր տուփի մեջ: Ներդիր-թերթիկը պարբերաբար թարմացվում է և պարունակում է Քսալկորի դեղի վերաբերյալ ամենավերջին տեղեկությունները:

## Ի՞նչ է թոքերի ALK-դրական և ROS1-դրական ոչ մանր բջջային քաղցկեղը

Թոքերի ոչ մանր բջջային քաղցկեղ ունեցող պացիենտների մոտավորապես 3%-5%-ը ունեն ALK (անապլաստիկ լիմֆոմա կինազա) գենի մուտացիա, այսպես կոչված՝ հիվանդության ALK-դրական ձևը, իսկ 1%--2%-ը՝ հիվանդության ROS1-դրական ձևը:

## Ի՞նչ է Քսալկորի դեղը և ի՞նչ նպատակով է այն օգտագործվում:

**Այս գլխում ներառված հարցեր և պատասխաններ**

- Ի՞նչ է Քսալկորի դեղը և ինչի՞ համար է այն օգտագործվում:
- Քսալկորի դեղը ինչպե՞ս կարող է օգնել Ձեզ:
- Ինչպե՞ս օգտագործել Քսալկորի դեղը:
- Ինչպիսի՞ կողմնակի ազդեցություններ կարող են առաջանալ Քսալկորի դեղն օգտագործելու դեպքում:
- Ի՞նչ պետք է անել կողմնակի ազդեցությունների ի հայտ գալու դեպքում:
- Տեղեկություններ անվտանգության վերաբերյալ:

### Ի՞նչ է Քսալկորի դեղը և ինչի՞ համար է այն օգտագործվում

Քսալկորին հակաուռուցքային դեղ է, որի ակտիվ բաղադրատարրը կրիզոտինիբն է: Այն հատուկ ստեղծվել է թոքերի ALK-դրական և ROS1-դրական ոչ մանր բջջային տարածված քաղցկեղ ունեցող չափահաս պացիենտների բուժման համար: Քսալկորի դեղը Ձեզ կարող է նշանակվել թոքերի քաղցկեղի տարածված փուլի առաջնային բուժման համար: Քսալկորի դեղը նշանակում են հիվանդության ուշ փուլում: Այն նաև կարող է նշանակվել նախորդ բուժման անարդյունավետության դեպքում:

### Քսալկորի դեղը ինչպե՞ս կարող է օգնել Ձեզ

Քսալկորի դեղը կարող է դանդաղեցնել կամ կանգնեցնել թոքերի ALK-դրական կամ ROS1-դրական ոչ մանր բջջային տարածված քաղցկեղի բարդացումը չափահաս պացիենտների շրջանում:

Թոքերի ALK-դրական կամ ROS1-դրական ոչ մանր բջջային քաղցկեղ ունեցող չափահաս պացիենտների շրջանում Քսալկորի դեղը կարող է նաև նպաստել հիվանդությամբ պայմանավորված ախտանիշների մեղմացմանը:

Քսալկորի դեղը կարելի է ընդունել տան պայմաններում, ինչը Ձեզ թույլ կտա շարունակել զբաղվել սովորական առօրյա գործունեությամբ:

## Ինչպե՞ս օգտագործել Քսալկորի դեղը

**Քսալկորի դեղի կիրառումը**

Բուժող բժիշկը այս դեղը Ձեզ նշանակել է թոքերի քաղցկեղի բուժման համար և տեղեկացրել է, թե ինչպես ընդունել դեղապատիճները: Բուժող բժիշկը նաև ուշադիր կհետևի Ձեր առողջական վիճակի ցանկացած փոփոխությանը և կողմնակի ազդեցությունների դրսևորմանը, որոնք կարող են ի հայտ գալ Քսալկորի դեղի ընդունման ընթացքում: Անհրաժեշտության դեպքում բուժող բժիշկը կարող է ճշգրտել օրական դեղաչափը:

**Անհրաժեշտ է ուշադիր հետևել բուժող բժշկի բոլոր խորհուրդներին և հրահանգներին: Եթե վստահ չեք, խորհրդակցեք բուժող բժշկի հետ:**

**Թոքերի ոչ մանր բջջային քաղցկեղ ունեցող չափահաս պացիենտների համար դեղի թույլատրելի դեղաչափը սովորաբար կազմում է 250 մգ դեղաչափով մեկ դեղապատիճ, որն ընդունվում է ներքին՝ օրական երկու անգամ:**

- Ընդունեք մեկ դեղապատիճ առավոտյան և մեկ դեղապատիճ երեկոյան:
- Դեղապատիճներն ընդունեք ամեն օր մոտավորապես նույն ժամին:
- Դեղապատիճն անհրաժեշտ է ջրով կուլ տալ ամբողջապես՝ առանց այն ճզմելու, լուծելու և բացելու:
- Դեղապատիճները կարելի է ընդունել սննդից անկախ՝ բոլոր դեպքերում խուսափելով թուրինջի (գրեյպֆրուտ) կամ դրա հյութի օգտագործումից:
- Առավել մանրամասն տեղեկություններին կարող եք ծանոթանալ ներդիր-թերթիկի «Ինչպե՞ս օգտագործել Քսալկորի դեղը» 3-րդ բաժնում:

## Ինչպե՞ս օգտագործել Քսալկորի դեղը

***Եթե մոռացել եք ընդունել դեղը***

- Եթե հաջորդ դեղաչափի ընդունմանը մնացել է **6 ժամ կամ ավելի շատ ժամանակ**, հիշելուն պես ընդունեք բաց թողնված դեղապատիճը: Հաջորդ դեղապատիճն ընդունեք նախատեսված ժամին:
- Եթե հաջորդ դեղաչափի ընդունմանը մնացել է **6 ժամից պակաս ժամանակ**, մի ընդունեք բաց թողնված դեղապատիճը: Հաջորդ դեղապատիճն ընդունեք նախատեսված ժամին:
- Հաջորդ այցի ժամանակ տեղեկացրեք բուժող բժշկին դեղի ընդունումը բաց թողնելու մասին:
- Չի կարելի ընդունել կրկնակի դեղաչափ (երկու դեղապատիճ միանգամից) բաց թողնվածը լրացնելու նպատակով:
- Եթե Քսալկորի դեղն ընդունելուց հետո Դուք փսխել եք, մի ընդունեք լրացուցիչ դեղաչափ, այլ պարզապես հաջորդ դեղապատիճն ընդունեք նախատեսված ժամին:

**Եթե Քսալկորի դեղը պատահաբար ավելի շատ եք օգտագործել, քան թույլատրելի է**

- Եթե ընդունել եք ավելի շատ դեղապատիճ, քան թույլատրելի է, այդ մասին անհապաղ հայտնեք բուժող բժշկին: Հնարավոր է բժշկական օգնության կարիք լինի:

***Եթե նշանակված դեղի հետ կապված ունեք որևէ հարց կամ մտահոգություն, միշտ խորհրդակցեք բուժող բժշկի հետ:***

## Ինչպիսի՞ կողմնակի ազդեցություններ կարող են առաջանալ Քսալկորի դեղն օգտագործելու դեպքում

Ինչպես բոլոր դեղերը, Քսալկորի դեղը նույնպես կարող է որոշ պացիենտների շրջանում առաջացնել կողմնակի ազդեցություններ: Եթե Քսալկորի դեղով բուժման ընթացքում ի հայտ է եկել ստորև նշված կողմնակի ազդեցություններից որևէ մեկը կամ այլ ախտանիշներ, այդ մասին հայտնեք բուժող բժշկին:

***Հնարավոր լուրջ կողմնակի ազդեցություններ*** **(մանրամասն տես ստորև՝ այս տեղեկագրի համապատասխան բաժիններում)**

- Լյարդային անբավարարություն
- Թոքերի ինտերստիցիալ հիվանդություն/պնևմոնիտ
- Լեյկոցիտների (այդ թվում՝ նեյտրոֆիլների) քանակի նվազում (լեյկոպենիա)
- Գլխապտույտ, ուշաթափություն կամ անհանգստության զգացողություն կրծքավանդակում (հնարավոր է դրանք լինեն սրտի ռիթմի խանգարման նշաններ)
- Մեկ կամ երկու աչքի տեսողության մասնակի կամ ամբողջական կորուստ

Թոքերի ոչ մանր բջջային քաղցկեղ ունեցող չափահաս պացիենտների շրջանում Քսալկորի դեղի ընդունման դեպքում ի հայտ եկող հնարավոր կողմնակի այլ ազդեցությունների նկարագրությանը կարող եք ծանոթանալ դեղի ներդիր-թերթիկում, որն առկա է դեղի յուրաքանչյուր տուփի մեջ:

**Կողմնակի ազդեցությունների վերաբերյալ հաղորդում**

Կողմնակի ազդեցության ի հայտ գալու դեպքում խորհրդակցեք բուժող բժշկի հետ: Սա նաև վերաբերում է այս տեղեկագրում չնշված որևէ այլ կողմնակի ազդեցությանը: Եվրասիական տնտեսական միության անդամ-երկրի տարածքում բացահայտված կողմնակի ազդեցությունների, այդ թվում՝ դեղերի անարդյունավետության մասին Դուք կարող եք ուղղակիորեն առցանց հաղորդել ՀՀ ԱՆ դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն՝ հետևյալ հղումով. www.pharm.am կամ զանգահարել թեժ գիծ. հեռախոսահամարներ՝ (+374 10) 20 05 05 և (+374 96) 22 05 05:

Կողմնակի ազդեցությունների մասին հաղորդելով՝ Դուք նպաստում եք այս դեղի անվտանգության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության ապահովմանը:

## Ի՞նչ պետք է անել կողմնակի ազդեցությունների ի հայտ գալու դեպքում

**Տեսողության խանգարում**

Դուք կարող եք ունենալ տեսողության խանգարում: Շատ դեպքերում տեսողության խանգարումներն ի հայտ են գալիս Քսալկորի դեղով բուժումը սկսելուց հետո՝ առաջին շաբաթվա ընթացքում: Դրանք կարող են ներառել՝

- լուսային փայլատակումներ,
- ոչ հստակ տեսողություն,
- կրկնատեսություն:

Այս ախտանիշները դիտվում են 10 մարդուց մոտավորապես 6-ի շրջանում:

Անհրաժեշտ է հատկապես զգույշ լինել փոխադրամիջոցներ վարելիս և սարքավորումների հետ աշխատելիս: Հավանաբար, ստիպված կլինեք խուսափել հնարավոր վտանգավոր գործունեություն իրականացնելուց, եթե զգաք, որ տեսողության փոփոխությունները խանգարում են Ձեզ այդ գործողություններն իրականացնել անվտանգ:

Տեսողության նշված խանգարումները երբեմն ժամանակի ընթացքում անհետանում են: Սակայն, եթե հետագայում դրանք պահպանվում կամ վատթարանում են, այդ մասին պետք է հայտնել բուժող բժշկին, որը հնարավոր է հետազոտության նպատակով Ձեզ ուղղորդի ակնաբույժի մոտ:

Հնարավոր է նաև առաջանա մեկ կամ երկու աչքի տեսողության մասնակի կամ ամբողջական կորուստ:

! **Անհապաղ տեղեկացրեք բուժող բժշկին, եթե ի հայտ է եկել տեսողության վատթարացում կամ մեկ կամ երկու աչքի տեսողության որևէ փոփոխություն և խանգարում: Հնարավոր է բուժող բժիշկը դադարեցնի Քսալկորի դեղով բուժումը և հետազոտության նպատակով Ձեզ ուղղորդի ակնաբույժի մոտ:**

## Ի՞նչ պետք է անել կողմնակի ազդեցությունների ի հայտ գալու դեպքում

***Անհապաղ դիմեք բուժող բժշկին, եթե ի հայտ է եկել սպորև նշված կողմնակի լուրջ ազդեցություններից որևէ մեկը:***

**Գլխապտույտ, ուշաթափություն, անհանգստության զգացողություն կրծքավանդակում, անկանոն սրտխփոց**

Անմիջապես տեղեկացրեք բուժող բժշկին, եթե ի հայտ են եկել նշված ախտանիշները, որոնք կարող են վկայել սրտի ռիթմի կամ էլեկտրական ակտիվության փոփոխությունների (դրանք երևում են էլեկտրասրտագրի վրա) մասին: Եթե ունեք սրտի հիվանդություն, բուժող բժիշկը ուշադիր կհետևի Ձեր սրտի աշխատանքին և հնարավոր է ճշգրտի Քսալկորի դեղի դեղաչափը: Քսալկորի դեղով բուժման ընթացքում բուժող բժիշկը հնարավոր է Ձեզ նշանակի էլեկտրասրտագրային հետազոտություն՝ համոզվելու համար, որ սրտի հետ կապված խնդիրներ չկան:

**Սրտամկանի կծկման հաճախականության նվազում (դանդաղասրտություն)**
Քսալկորի դեղը կարող է առաջացնել սրտամկանի կծկման հաճախականության նվազում: Բուժող բժիշկը կհետևի Ձեր սրտի աշխատանքին և հնարավոր է ճշգրտի Քսալկորի դեղի դեղաչափը:
**Լեյկոցիտների (այդ թվում՝ նեյտրոֆիլների) քանակի նվազում (լեյկոպենիա)**
Անհապաղ տեղեկացրեք բուժող բժշկին, եթե Ձեր մարմնի ջերմաստիճանը բարձրացել է կամ առկա է վարակի զարգացում: Բուժող բժիշկը հնարավոր է նշանակի արյան հետազոտություն, իսկ նորմայից շեղումների բացահայտման դեպքում կարող է նվազեցնել Քսալկորի դեղի դեղաչափերը:
**Սրտային անբավարարություն**
Անմիջապես տեղեկացրեք բուժող բժշկին, եթե ի հայտ են եկել սրտային անբավարարության նշաններ կամ ախտանիշներ: Այդ ախտանիշները կարող են ներառել հևոց (հանգստի և ծանրաբեռնվածության պայմաններում), ձեռքերի, ոտքերի, դաստակների, ոտնաթաթերի կամ դեմքի այտուց կամ մարմնի քաշի արագ աճ: Բուժող բժիշկը կարող է ժամանակավորապես կամ ամբողջովին դադարեցնել Քսալկորի դեղով բուժումը կամ նվազեցնել Քսալկորի դեղի դեղաչափը՝ կախված Ձեր առողջական վիճակից:
**Ստամոքսի կամ աղիների պատերում անցքի (թափածակում) գոյացում**
Անմիջապես տեղեկացրեք բուժող բժշկին, եթե ի հայտ են եկել սուր ցավեր ստամոքսում կամ որովայնում, տենդ, սարսուռ, հևոց, սրտի հաճախակի զարկեր կամ կղազատման հաճախականության փոփոխություն: Նշված ախտանիշները կարող են լինել ստամոքսի կամ տասներկումատնյա աղու պատերում անցքի (թափածակում) գոյացման նշաններ:
**Լյարդային անբավարարություն**
Քսալկորի դեղով բուժման ընթացքում անհրաժեշտ է կանոնավոր իրականացնել արյան հետազոտություն: Դա թույլ է տալիս հսկել տարբեր օրգանների, այդ թվում՝ լյարդի ֆունկցիան:

! **Անհապաղ տեղեկացրեք բուժող բժշկին, եթե զգում եք սովորականից ավելի արտահայտված հոգնածություն, մաշկի կամ ակնագնդերի գույնը դարձել է դեղին, մեզը մգացել կամ դարձել է**

**դարչնագույն (թեյագույն), ի հայտ են եկել սրտխառնոց, փսխում կամ ախորժակի նվազում, ցավ կողոսկրերի ստորին աջ հատվածում, քոր կամ, եթե սովորականից ավելի հեշտությամբ կապտուկներ են առաջանում:**

**Բուժող բժիշկը լյարդի ֆունկցիայի ստուգման նպատակով կարող է նշանակել արյան հետազոտություն և նորմայից շեղումների բացահայտման դեպքում կարող է նվազեցնել Քսալկորի դեղի դեղաչափը կամ դադարեցնել բուժումը:**

**Վերոնշյալ ախտանիշներից որևէ մեկի առաջացման դեպքում անհապաղ դիմեք բուժող բժշկին՝ չսպասելով կլինիկայի Ձեր հաջորդ այցին:**

**Շնչառության խանգարում**

Հնարավոր կողմնակի ազդեցություններից մեկը թոքերի ինտերստիցիալ հիվանդությունն է:

! **Եթե Քսալկորի դեղով թոքերի քաղցկեղի բուժման փուլի մեկնարկից հետո ի հայտ են եկել նոր գանգատներ, օրինակ՝ շնչառության դժվարացում, հազ, մարմնի ջերմաստիճանի բարձրացում կամ, եթե դիտվում է թոքերի քաղցկեղով պայմանավորված արդեն առկա ախտանիշների սրացում, այդ մասին անհապաղ տեղեկացրեք բուժող բժշկին:**

## Ի՞նչ պետք է անել կողմնակի ազդեցությունների ի հայտ գալու դեպքում

**Գլխապտույտ**

Քսալկորի դեղով բուժման ընթացքում որոշ պացիենտների շրջանում կարող է առաջանալ գլխապտույտ:

! **Քիչ հավանական է, որ գլխապտույտն ունենա լուրջ բնույթ, սակայն Դուք պետք է այդ մասին հայտնեք բուժող բժշկին:**

**Գերհոգնածություն**

Քսալկորի դեղով բուժման ընթացքում կարող եք զգալ թուլություն և գերհոգնածություն: Դա կարող է լինել կողմնակի ազդեցություն:

**Օգտակար է իմանալ**

- Եղեք ակտիվ: Զբաղվեք հասարարական գործունեությամբ և ժամանակ անցկացրեք մաքուր օդում:
- Կատարեք Ձեզ հարմար ֆիզիկական վարժություններ:
- Ունեցեք կանոնավոր կարճատև ընդմիջումներ:
- Հանգստացեք, լսեք երաժշտություն և կարդացեք:
- Մի ամաչեք և խնդրեք ընտանիքի անդամներին, ընկերներին կամ հարևաններին հնարավորության դեպքում մի փոքր օգնել Ձեզ առօրյա խնդիրները լուծելու հարցում:

## Տեղեկություններ անվտանգության վերաբերյալ

**Քսալկորի դեղի միաժամանակյա կիրառումը այլ դեղերի հետ**

Քսալկորի դեղի միաժամանակյա կիրառումը որոշ դեղերի հետ կարող է փոփոխել ինչպես Քսալկորի դեղի, այնպես էլ մյուս դեղերի արդյունավետությունը: Նման դեղերից են բակտերիային վարակների բուժման համար կիրառվող հակաբիոտիկները, հակասնկային դեղերը, էպիլեպսիայի, սրտի հիվանդությունների, զարկերակային գերճնշման բուժման համար կիրառվող դեղերը, ինչպես նաև ծակոտկեն սրոհունդ *(Hypericum perforatum)* պարունակող դեղերը: Լրացուցիչ տեղեկությունների համար խորհրդակցեք բուժող բժշկի հետ և կարդացեք Քսալկորի դեղի ներդիր-թերթիկը:

Քսալկորի դեղը կարելի է օգտագործել սննդի ընդունումից անկախ, սակայն Քսալկորի դեղով բուժման ընթացքում անհրաժեշտ է խուսափել թուրինջի (գրեյպֆրուտ) կամ դրա հյութի օգտագործումից, քանի որ դրանք կարող են փոփոխել օրգանիզմում դեղի պարունակությունը:

Ձեզ խորհրդատվություն տրամադրող բոլոր բժիշկներին տեղեկացրեք, եթե ունեք որևէ այլ հիվանդություն կամ ալերգիա, ինչպես նաև՝ եթե ընդունում եք այլ դեղեր, այդ թվում՝ վիտամիններ պարունակող, բուսական ծագմամբ և առանց դեղատոմսի բացթողնվող դեղեր:

Քսալկորի դեղի և ներքին ընդունման հակաբեղմնավորիչների միաժամանակյա ընդունման արդյունքում հնարավոր է հակաբեղմնավորիչները դառնան անարդյունավետ հղիությունը կանխելու համար:

**Ազդեցությունը փոխադրամիջոցների վարելու և սարքավորումների հետ աշխատելու վրա**

Պետք է դրսևորել առանձնահատուկ զգուշություն փոխադրամիջոցների վարելիս և սարքավորումների հետ աշխատելիս, քանի որ Քսալկորի դեղի ընդունման դեպքում կարող են ի հայտ գալ տեսողության խանգարումներ, գլխապտույտ, զարկերակային ճնշման անկում, ուշաթափություն և հոգնածություն: Ծագած բոլոր հարցերը քննարկեք բժշկի հետ:

## Տեղեկություն անվտանգության վերաբերյալ

### *Հղիություն և կրծքով կերակրման շրջան*

Քսալկորի դեղը չի կարելի օգտագործել հղիության ընթացքում:

Եթե հղի եք, ենթադրում եք, որ հղի եք, պատրաստվում եք հղիանալ կամ կրծքով կերակրում եք, նախքան այս դեղը կիրառելը խորհրդակցեք բուժող բժշկի հետ:

Քսալկորի դեղով բուժման ընթացքում կանանց խորհուրդ է տրվում խուսափել հղիությունից, իսկ տղամարդկանց՝ բեղմնավորումից, քանի որ այս դեղը կարող է վնասել ապագա երեխային:

Եթե առկա է որևէ հավանականություն, որ այս դեղն ընդունող անձը կարող է հղիանալ կամ դառնալ հայր, ապա բուժման ընթացքում և բուժումն ավարտելուց առնվազն 90 օրվա ընթացքում նա պետք է կիրառի հակաբեղմնավորման մի քանի արդյունավետ միջոց, քանի որ Քսալկորի դեղով բուժման ընթացքում ներքին ընդունման հակաբեղմնավորիչները կարող են լինել անարդյունավետ:

Քսալկորի դեղով բուժման ընթացքում խորհուրդ չի տրվում կրծքով կերակրել: Քսալկորի դեղը կարող է վնասել կրծքով կերակրվող երեխային:

## Պացիենտի քարտ-հուշաթերթիկ

Խնդրում ենք լրացնել այս քարտը և ցույց տալ բոլոր այն բժիշկներին, բուժքույրերին կամ դեղագետներին, որոնց դիմում եք խորհրդատվություն ստանալու համար:

**Պացիենտի անուն, ազգանուն, հայրանուն** ——————————————————

**Բժշկի անուն, ազգանուն, հայրանուն** ——————————————————

**Բժշկի հեռախոսահամար** ——————————————————

**Քսալկորի դեղով բուժման մեկնարկի ամսաթիվ** ——————————————

**Տեղեկացրեք բուժող բժշկին, եթե ընդունում եք, վերջերս ընդունել եք կամ պատրաստվում եք ընդունել այլ դեղեր, այդ թվում՝ բուսական ծագմամբ և առանց դեղատոմսի բացթողնվող դեղեր:**

**Ինչպես բոլոր դեղերը, Քսալկորի դեղը նույնպես կարող է որոշ պացիենտների շրջանում առաջացնել կողմնակի ազդեցություններ: Եթե Քսալկորի դեղով բուժման ընթացքում նկատում եք ստորև նշված կողմնակի ազդեցություններից որևէ մեկի կամ այլ ախտանիշների զարգացում, այդ մասին հայտնեք բուժող բժշկին (ավելի մանրամասն տես Պացիենտի տեղեկագրի համապատասխան բաժինները):**

- **Լյարդային անբավարարություն**
- **Թոքերի ինտերստիցիալ հիվանդություն/պնևմոնիտ**
- **Լեյկոցիտների (այդ թվում՝ նեյտրոֆիլների) քանակի նվազում (լեյկոպենիա)**
- **Գլխապտույտ, ուշաթափություն կամ անհանգստության զգացողություն կրծքավանդակում (հնարավոր է դրանք լինեն սրտի ռիթմի խանգարման նշաններ)**
- **Մեկ կամ երկու աչքի տեսողության մասնակի կամ ամբողջական կորուստ**

Թոքերի ոչ մանր բջջային քաղցկեղ ունեցող չափահաս պացիենտների շրջանում Քսալկորի դեղի ընդունման դեպքում ի հայտ եկող հնարավոր կողմնակի այլ ազդեցությունների նկարագրությանը կարող եք ծանոթանալ դեղի տուփի մեջ առկա ներդիր-թերթիկում:

## Պացիենտի քարտ-հուշաթերթիկ

Խնդրում ենք լրացնել այս քարտը և ցույց տալ բոլոր այն բժիշկներին, բուժքույրերին և դեղագետներին, որոնց դիմում եք խորհրդատվություն ստանալու համար: